## Գ Ծ Ա Գ Ր Ե Ր Ի   Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

| Հ/Հ | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը | ԷՋ |
|---|---|---|
| 1 | ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ: ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ՃՇ-1 |
| 2 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ) | ՃՇ-2 |
| 3 | ՆԿՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ) | ՃՇ-3 |
| 4 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃՇ-4 |
| 5 | ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃՇ-5 |
| 6 | ԿՏՐՎԱԾՔ Ա - Ա :ՃԱԿԱՏ Բ - Գ ԱՌԱՆՑՔՈՎ | ՃՇ-6 |
| 7 | ԴՌՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ:ՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ | ՃՇ-7 |
| 8 | ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | ՃՇ-8 |
| 9 | ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | ՃՇ-9 |
| 10 | ՄԻՋՆՈՐՄԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ (b=10սմ) | ՃՇ-10 |
| 11 | ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃՇ-11 |
| 12 | ԱՍՏԻՃԱՆ - 1,2 :ԹԵՔՈՒՂԻ:ԿՏՐՎԱԾՔՆԵՐ | ՃՇ-12 |
| 13 | ՑԱՆԿԱՊԱՏԻ,ՍԱԼՎԱԾՔԻ,ՀԱՐԹԱԿԻ ՍԽԵՄԱ<br>ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | ՃՇ-13 |
| 14 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ) | ՃՇ-14 |
| 15 | ԿՏՐՎԱԾՔ Ա - Ա : Բ - Բ | ՃՇ-15 |
| 16 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ) | ՃՇ-16 |
| 17 | ԿՏՐՎԱԾՔ Ա - Ա : Բ - Բ :Գ - Գ | ՃՇ-17 |
| 18 | ՏԱՆԻՔԻ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ:ՁԵՂՆԱԼՈՒՍԱՄՈՒՏ:ՀԱՆԳՈՒՅՑ - 1 | ՃՇ-18 |
| 19 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ 2 ÷ 7 | ՃՇ-19 |
| 20 | ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | ՃՇ-20 |

### ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ




ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ    Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Բ ա ց ա տ ր ա գ ի ր

Նախագծվող օբյեկտի անվանումը` Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի արվեստի դպրոցի (Շահումյան 1) հիմնանորոգման աշխատանքներ

Նախագծով նախատեսված է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները.
1.1 Փոխել դռները սպիտակ գույնի մետաղոպլաստե դռներով ;
1.2 Փոխել պատուհանները` սպիտակ գույնի ապակեփաթեթով,մետաղոպլաստե պատուհաններով (բացվող և չբացվող), ներառյալ սարքերը :
1.3 Տեղադրել պլաստմասե պատուհանագոգեր 15-40 սմ լայնությամբ:
1.4 Պատուհանների և դռների տեղադրումից առաջ քանդել շեպերի սվաղը, տեղադրումից հետո վերականգնել քանդված շեպերը և ներկել , ծեփամածկմամբ;
1.5 Կատարել սենքերի ներքին հարդարման աշխատանքներ համաձայն մասնագրի:
1.6 Միջանցքի հատակը երեսապատել պրեսգրանիտով,դահլիճինը կավրոլինով,իսկ մնացած սենքերում տեղադրել լամինատե հատակներ:Տեղադրել համապատասխանաբար պրեսգրանիտե և լամինատե շրիշակներ:
1.7 Շենքի գլխավոր ճակատային հատվածը սվաղել և ներկել:
1.8 Ներկել պատուհանների բոլոր մետաղական ճաղերը:
1.9 Գլխավոր մուտքի և նկուղի աստիճանները երեսապատել բազալտե սալերով:
1.10 Կատարել ասֆալտբետոնե սալվածքի և բետոնե հարթակի վերանորոգում:
1.11 Վերանորոգել արտաքին մետաղական ցանկապատը և դարպասը:
1.12Վերանորոգել ծածկարանները:

2. Տանիքի հիմնանորոգում

Նախագիծը կատարված է համաձայն ՀՀ գործող նորմերի:
Տանիքի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ անհրաժեշտ է կատարել նորոգման աշխատանքներ`փոխել տանիքի ծածկույթը:
Ապամոնտաժել տանիքի հին ասբոթիթեղյա ծածկույթը, հին ջրահեռացման խողովակները և ջրհավաք ձագարները:
Ուսումնական մասնաշենքի տանիքի ծպեղնավոտքերի տակ տեղադրել թեքաններ,լրացնել եզրային տախտակամածը և կավարամածը:Դահլիճի տանիքում տեղադրել նոր կանգնակներ ,ծպեղնավոտքերը իրար կապել հորիզոնական կապերով,կառուցել եզրային տախտակամած համապատասխան լայնությամբ,խտացնել կավարամածը նոր տախտակների տեղադրմամբ:Դահլիճի տանիքում իրականացնել ջերմամեկուսացում շլաքի շերտի տեղադրումով:
Մոնտաժել նոր ջրհորդանները ,ջրհավաք ձագարները և իրականացնել 0.55մմ հաստությամբ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով տանիքի նոր ծածկույթ: իրականացնել ձեղնալուսամուտների կավարամածը և ծածկել 0.55մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով, այնուհետև տեղադրել շերտափեղկերը /ձեղնալուսամուտների և նրանց պատուհանների չափսերը ենթակա են ճշտման տանիքի ապամոնտաժման աշխատանքները իրականացնելուց հետո/: Կատարել ծպեղնաոտքերի կապում մետաղալարով շենքի կրող էլեմենտներին(պարապետ, ծածկի սալ և այլն):Կատարել փայտե կոնստրուկցիաների հանգույցների (թեքան-ծպեղնաոտք, կանգնակ-մարդակ և այլն) ամրացում լրացուցիչ ճարմանդներով (скоба),
Մոնտաժել նոր ջրահեռացման խողովակները /երկարությունները ճշտել տեղում/:
Տանիքի քիվային հատվածները երեսապատել ցինկապատ թիթեղով:
Կատարել փայտյա կոնստրուկցիաների, կավարամածի ու տախտակամածի մշակում հակահրդեհային ու հականեխիչ լուծույթով:
Ծածկի ասբոշիֆերյա ծածկույթի քանդումից հետո,անհրաժեշտ է նորոգել,լրացնել և փոխել վնասված փայտե էլեմենտները,նախորոք նրանց տեղերը և քանակը համաձայնեցնելով նախագծային կազմակերպության հետ:
3.Կապալի օբյեկտին, դրա առանձին մասերին և օգտագործվող նյութերին ներկայացվող երաշխիքային նվազագույն ժամկետը սահմանվում է -2- տարի.
4.Աշխատանքի կատարման ժամանակ օգտագործվող բոլոր նյութերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներին և նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև տվյալ ապրանքների որակի չափանիշներին (սերտիֆիկատների) պահանջներին.
5.Աշխատանքի կատարման համար պահանջվող լիցենզիային, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները.
ա/ կապալառուն տվյալ օբյեկտի աշխատանքները կատարելու համար պետք է ունենա քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա, ներառյալ ներդիրները`
- բնակելի, հասարակական և արտադրական;
բ/ աշխատանքների կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են`
ինքնաթափ,կտրող,հատող և ծակող գործիքներ:
գ/ աշխատանքների կատարման համար կապալառուն պետք է ունենա ինժեներական անձնակազմ, որոնց միջին մասնագիտական ստաժը կազմում է առնվազն 2 տարի:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ք.ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ (ՇԱՀՈՒՄՅԱՆ 1) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | ՊԱՏՎԵՐ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/46-3» | | |
| | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ | Փուլ | Թերթ | Թերթեր |
| ՏՆՕՐԵՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ: ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ԱՆ | ՃՇ-1 | 20 |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Գ.ԴԱԼԼԱՔՅԱՆ | | «Թ.Ա.Հ.Գ.Գրիգ» ՍՊԸ | | |